ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցած ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Զովունի, 1-ին փողոց 200 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2025թ-ի մարտի 6-ին ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Զովունի, 1-ին փողոց 200 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի 2025 թ-ի փետրվարի 5-ի համարում:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզի Զովունի բնակավայրի բնակիչները, նախագծող կազմակերպության «Լուք» ՍՊԸ, նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Էկոնոմ Էկո» ՍՊԸ) ներկայացուցիչները:

Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ **Ս. Թորոսյանը** ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց ՇՄԱԳ թիմի ներկայացուցիչ Մերի Վարդանյանին:

Մ. Վարդանյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է 2 հանրային քննարկում: Քննարկումների արդյունքում արված առաջարկությունները հաշվի կառնվեն հետագա գործողությունների համար: Այնուհետև Մ. Վարդանյանը ներկայացրեց ծրագրին և նախագծին վերաբերող որոշ մանրամասներ, հնարավոր բնապահպանական միջոցառումները, այնուհետև խոսքը փոխանցեց նախագծող կազմակերպության ներկայացուցիչ Ս. Աբովյանին:

Ս.Աբովյանը ներկայացրեց նախագծի մանրամասները և տեխնիկական ցուցանիշները:

Ս. Թորոսյանը հարց ուղղեց կայանատեղիների քանակի և շենքերի՝ մայրուղուց հեռավորության վերաբերյալ, որոնց պատասխանեց կազմակերպության ներկայացուցիչը:

Ա. Բաղդյանը հարց ուղղեց պատշգամբների առկայության վերաբերյալ:

Տ.Առաքելյանը նշեց, որ շենքերը 2 ճակատների կողմից ունեն պատշգամբներ:

Բնակիչ **Վ.Մարտիրոսյանը** հետաքրքրվեց, արդյո՞ք օրենքով նախատեսված է գյուղական բնակավայրում բարձրահարկ շենքերի կառուցում, քանի որ իր սեփական տարածքը գտնվում է հարակից տարածքում:

Պատվիրատու կազմակերպության ներկայացուցիչը հարց ուղղեց, թե տվյալ բնակչի տարածքը ի՞նչ շինություն է: Նա պատասխանեց, որ բնակելի տուն է:

Բնակավայրի վարչական ղեկավարը հետաքրքրվեց, թե ի՞նչ մտավախություն ունի բնակիչը:

Բնակիչը նշեց, որ տվյալ նախագիծը անհարմարություն է պատճառում իրեն:

Նախագծող կազմակերպության ներկայացուցիչ **Տ. Առաքելյանը** նշեց, որ նախագիծը կազմվել է հաշվի առնելով բոլոր նորմերը, իսկ ՇՄԱԳ փորձագետ **Մ. Վարդանյանը** նշեց, որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մանրամասն վերլուծությունը ներկայացվելու է ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ուղարկվելու է կարծիքի Շրջակա միջավայրի նախարարություն:

Նախագիծը որոշ վերապահումներով ընդունվեց Զովունի բնակավայրի մի քանի բնակիչների կողմից:

Այլ հարցեր չհնչեցին և քննարկումն ավարտեց:

Քննարկումների վարող և պատասխանատու՝
Նաիրի համայնքի համայնքապետարանի
անձնակազմի առաջատար մասնագետ՝ Ս.Թորոսյան

«Լուք» ՍՊԸ տնօրեն՝ Տ. Առաքելյան